ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № 17

Ծառայության մատուցման մասին

«14» 11.2019 թ.

«Արլիկա-Գազ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Կ. Բալագյոզյանի, մի կողմից և ՀՀ Գեղարքունիքի մարզի Բժշկական Կենտրոն ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Աշոտ Կարապետյանի (այսուհետ՝ Պատվիրատու), որը գործում է կազմակերպության Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայամանագիրը հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

1.1 «Կատարողը» պարտավորվում է «Պատվիրատուին» մատուցել գազի տնտեսության սպասարկող անձնակազմի տեխնիկական պատրաստման /մեկ մարդ/ և վերապատրաստման /մեկ մարդ/ դասընթացների կազմակերպման ծառայություններ, իսկ «Պատվիրատուն» պարտավորվում է վճարել սահմանված գումարը:

2. Պայմանագրի գինը և վճարման կարգը

2.1 Մատուցվող ծառայությունների արժեքը և քանակը ամրագրվում է «Կատարողի» կողմից ներկայացվող հաշվարկային փաստաթղթերով, որոք կազմում են սույն պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 «Պատվիրատուի» կողմից սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների դիմաց վճարումը կատարվում է «Կատարողի» կողմից նշված հաշվեհամարին գումարի փոխանցման կարգով՝ Կատարողի կողմից հաշվարկային փաստաթղթի ներկայացման ամսաթվից հինգ օրվա ընթացքում:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 «Կատարողը» պարտավոր է՝

3.1.1 Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունները մատուցել պատշաճ կերպով պայմանագրի կնքման պահից մեկ ամսվա ընթացքում:

3.1.2 «Կատարողը» իրավունք ունի անձամբ որոշել անհրաժեշտ աշխատանքների կատարման ընթացքը:

3.2 «Պատվիրատուն» պարտավոր է՝

3.2.1 Ընդունել և վճարել մատուցված ծառայությունների դիմաց սույն պայմանագրի 2-րդ կետով սահմանված չափով և կարգով:

3.2.2 «Պատվիրատուն» իրավունք ունի հսկողություն իրականացնել «Կատարողի» կողմից ծառայությունների որակյալ մատուցման նկատմամբ, չմիջամտելով վերջինիս գործունեությանը:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1 Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը

5.1 Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար կողմերը պատասխանատվություն չեն կրում, եթե դա տեղի է ունեցել անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագրի կնքումից հետո, և կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել դրա առաջացումը:

6. Վեճերի լուծման կարգը և Պայմանագրի վաղաժամկետ լուծման հիմքերը

6.1. Սույն պայմանագրի հետ կապված վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Կողմերի համաձայնության չգալու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

6.2. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կողմերն իրավունք ունեն վաղաժամկետ լուծելու պայմանագիրը՝ նախապես մյուս կողմին այդ մասին ծանուցելով պայմանագրի լուծման պահից 15 օրվա ընթացքում:

7.Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է անորոշ ժամկետով:

8. Այլ դրույթներ

8.1 Սույն պայմանագիրը կազմված է հայերեն երկու օրինակից, որոնք ունեն միևնույն իրավաբանական ուժը, յուրաքանչյուր կողմին տրված է մեկ օրինակ:

8.2. Բոլոր այն հարաբերությունները, որոնք չեն կարգավորվում սույն պայմանագրով, կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

Կողմերի հասցեները և վավերապայմանները

Կատարող	Պատվիրատու
«ԱՐԼԻԿԱ - ԳԱԶ»ՍՊԸ	Գավառի բժշկական կենտրոն ՓԲԸ
Երևանի ուսումնական կենտրոն	ք. Գավառ, Ազատության փող.
ք. Գավառ Սայադյան 22	ՀՎՀՀ 08417304
ՎՏԲ Հայաստան բանկ Կամո մ/ճ	
Հ/հ16021100082500	
ՀՎՀՀ 08414623	
Ստորագրություն _____ Կ. Բալագյոզյան	Ստորագրություն _____ Ա. Կարապետյան
Կ. Տ.	Կ. Տ.